ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(XIX դ. վերջ – XX դ. սկիզբ)

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Ռուսական կայսրության ներքին իրադրության անգամ թռուցիկ ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ երկրում հասունանում է համազգային մասշտաբի քաղաքական նոր ճգնաժամ՝ իր մեջ ներառելով ինչպես աշխատավորական մեծամասնությանը, այնպես էլ քաղաքական վերնաշենքը: Գործադուլային շարժման ահագնացող ալիքը, ժողովրդական մասսաների պայքարի ակտիվացումը կառավարությանը ստիպեցին վերանայել իր ներքին քաղաքականությունը, փորձել ոչ էական փոփոխությունների և զիջումների գնով մեղմել դժգոհությունը երկրում: Սակայն անգամ այդ վեհերոտ փորձերը միանշանակ չընդունվեցին կառավարող շրջաններում ձևավորված երկու հոսանքների՝ լիբերալ-բուրժուազնվական և պահպանողական-ազնվական խմբավորումների կողմից: Վերնախավում առկա խորը տարաձայնությունները, որոնք հաճախ վերածվում էին բացահայտ հակամարտության, խանգարում էին կառավարությանը որոշակի և հետևողական քաղաքականություն վարել ներքին և արտաքին, փաստորեն, կարևորագույն բոլոր հարցերում: Կարճ ժամանակահատվածում փոխվում են ամբողջ կաբինետներ և բարձրագույն իշխանության պաշտոնյաներ, իրար են հետևում մեկը մյուսին հակասող հրամանագրեր, նայած, թե այդ ժամանակահատվածում, որ հոսանքն էր ավելի գերակշիռ դեր խաղում կառավարության մեջ և արքունիքում: Կառավարության գործունեության հակասականությունն առավել հստակ երևակվում էր կայսրության՝ ոչ ռուս ազգաբնակչության շրջանում տարվող մշակութային և այլ կարգի քաղաքականության մեջ: Այսպես, ժամանակի քաղաքական խոշորագույն գործիչներից մեկի՝ Ս. Յու. Վիտտեի վկայությամբ՝ արքունիքում և կառավարության մեջ բավական սուր վեճերի և անգամ քաղաքական բախումների առիթ է դարձել հայկական հոգևոր հաստատությունների շարժական ու անշարժ գույքը բռնագրավելու մասին 1903 թ. հունիսի 13-ի տխրահռչակ հրամանագիրը, որի իրականացումից էր կախված հայկական ազգային կրթական ու մշակութային բազում հաստատությունների ճակատագիրը: Իր հուշերում նա ուղղակի նշում է. «Իշխան Գոլիցինը, ձգտելով Կովկասի ռուսիֆիկացմանը, առավել թշնամաբար էր վերաբերվում հայերին, հատկապես այն բանից հետո, երբ վերջին շրջանում թուրքական բռնաճնշումներից խուսափած բազմահազար թուրքահայեր ապաստան գտան Կովկասում՝ փորձելով իրենց հետ բերել նաև արևմտահայության հեղափոխական տրամադրությունները և դրանք տարածել հավատակիցների շրջանում: Հայերին

զսպելու համար իշխան Գոլիցինը առաջարկեց բռնագրավել հայ եկեղեցու գույքը՝ հաշվի չառնելով, որ հայկական եկեղեցին հայ ժողովրդի հոգին է, և որ եկեղեցում կենտրոնացած է ողջ բարեգործությունն ու ազգային կրթությունը:

Վճռականորեն բողոքելով այս ինչպես քաղաքական, այնպես էլ բարոյական տեսակետից սխալ և վնասակար առաջարկի դեմ, ես բացահայտեցի դրա ողջ փարիսեցիությունը: Ես կարողացա խորհրդակցության, փաստորեն, բոլոր անդամներին հակել իմ տեսակետի կողմը՝ Պլևեից և Գոլիցինից բացի: Անգամ մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը խնդրում էր թագավորին հաստատել մեծամասնության տեսակետը, սակայն Նորին Մեծությունը հաստատեց փոքրամասնության առաջարկը, որը հարուցեց հայերի զանգվածային բողոքը Կովկասում և նրանից դուրս:

Գոլիցինի դեմ ձեռնարկված մահափորձից հետո վերջինս այլևս չվերադարձավ Կովկաս, ուր նրան փոխարինեց կոմս Վորոնցով Դաշկովը: Վերջինս անհապաղ վերջ տվեց տեղացիների հետապնդումներին և մեծ աշխատանք կատարեց վերոհիշյալ հրամանագրի վերացման ուղղությամբ»[1]:

Հայ ժողովրդի մշակութային և կրթության հարցերում ռուսական կառավարության վարած անհետևողական, անգամ հակասական քաղաքականության մեկ այլ, առավել ցցուն օրինակի հանդիպեցինք Ռուսաստանյան Դաշնության արխիվներում մեր պրպտումների ժամանակ՝ ի դեմս մինիստրների խորհրդի նախագահ՝ Պ. Ա. Ստոլիպինի և ժողովրդական լուսավորության մինիստր Ա. Ն. Շվարցի գրագրության: Իրեն հատուկ խորաթափանցությամբ և պետական շահի գիտակցությամբ մեծ բարեփոխիչը մինիստրին հղած իր ուղերձում ցավ և մտահոգություն է հայտնում, որ հայկական դպրոցների և հոգևոր սեմինարիաների, այդ թվում նաև Էջմիածնի ճեմարանի շրջանավարտները ցածր կրթամակարդակի և ռուսաց լեզուն վատ իմանալու պատճառաբանությամբ չեն կարողանում դիմել ռուսական համալսարաններ և հետագա կրթություն ստանալու համար ստիպված գնում են արտասահման, քանի որ արևմտաեվրոպական, հատկապես գերմանական համալսարանները հյուրընկալորեն բացում են իրենց դռները: Այդ կարճատև քաղաքականության արդյունքում Էջմիածնի միաբանության առավել կարևոր դեմքերի կեսից ավելին ունեն գերմանական կրթություն: Կովկասից գնալով Եվրոպա և կրթվելով Ռուսաստանի հանդեպ թշնամական մշակութային միջավայրում, ծանոթ չլինելով ռուսական հոգևոր կյանքին՝ նրանք, բնականաբար, չեն կարող հակակրանքով չլցվել դեպի իրենց հայրենիքը: Այդ մարդիկ և այդ տիպի ղեկավարները, ունենալով միայն երկու իդեալ՝ հայրենի Կովկասը և հյուրընկալ ու զարգացած Եվրոպան, չեն կարող դառնալ այն տարրը, որին կարելի է վստահել ժողովրդական կրթությունը. «Նման ոչ նորմալ իրավիճակը շտկելու համար առաջարկում ենք բոլոր այն երիտասարդ անձանց, որոնք ավարտել են հոգևոր ակադեմիայի (ճեմարան) կամ էլ սեմինարիաների լրիվ դասընթացը և որոշել են նվիրվել հոգևոր գործունեության կամ

[1] С. Ю. В и т т е. Воспоминания, мемуары. Т. 1. Минск–М., 2001, с. 314-318.

էլ ուսուցչության, ընդունել ռուսական համալսարաններ՝ ուսանողի կարգավիճակով»[2]:

Հատկանշական է, որ պատասխան գրության մեջ ժողովրդական լուսավորության մինիստր Ա. Ն. Շվարցի բերած բոլոր հակափաստարկները վարչապետը որակում է որպես քիչ համոզիչ՝ պնդելով իր տեսակետի վրա: Այդպիսով, առավել քան ակնհայտ է կառավարական ամենաբարձր ոլորտներում միասնական տեսակետի և քաղաքականության լիակատար բացակայությունը: Նման հակասականությունը կառավարությունը դրսևորում էր նաև ուսանողության շրջանում տարվող իր համապետական քաղաքականության մեջ:

Այսպես, 1899 թ. հրապարակվեց կառավարության հրամանը անհնազանդ ուսանողներին բանակ զորակոչելու մասին, որի արդյունքում զորակոչվեցին հարյուրավոր ուսանողներ. մյուս կողմից նույն այդ կառավարությունն արդեն մեկ այլ որոշմամբ ուսանողներին իրավունք տվեց ստեղծել ուսանողական գիտական խմբակներ, փոխօգնության դրամարկղեր, հայրենակցական միություններ, որոնք, բնական է, չէին կարող չնպաստել ուսանողության առավել համախմբման և քաղաքական ակտիվացման առանց այն էլ բուռն ընթացող գործընթացին: Օգտվելով նման հնարավորությունից՝ տարբեր ազգերի պատկանող ուսանողական կազմակերպությունները միավորվում են ընդհանուր ուսանողական կազմակերպության՝ «Միութենական խորհրդի» մեջ, որը, աստիճանաբար ուժեղանալով, դառնում է հասարակական լուրջ կշիռ ունեցող կազմակերպություն, և որի նշանակությունը դուրս է գալիս համալսարանի ուսանողական շարժման սահմաններից: Արդեն 1896թ. «Միութենական խորհուրդը» հանդես էր գալիս որպես 45 ուսանողական հայրենակցական միությունների գործադիր մարմին, որի ձեռքում էր կենտրոնացված մի քանի հազար ուսանողների կազմակերպական ղեկավարման գործը: Խորհուրդն իր ձեռքն էր վերցրել նաև ուսանողական ելույթներից, թատերական ներկայացումներից և ուսանողության՝ կողմնակի աշխատանքներից ստացվող հասույթի (այն հաճախ պատկառելի գումար էր կազմում) մեծ մասի տնօրինումը: Նրան նույնիսկ բացահայտորեն միջամտում էին համալսարանական ղեկավարության տնտեսական քաղաքականության որոշակի քայլերին՝ ձգտելով իրենց վերահսկողությունը սահմանել ֆինանսական այլ աղբյուրների և միջոցների վրա: Այդ երևույթը, բնականաբար, չէր կարող վրիպել համալսարանական վարչակազմի աչքից և չմտահոգել նրան: Ժողովրդական լուսավորության մինիստր, հայազգի կոմս Ի. Դելյանովը, օրինակ՝ երկաթուղային ճանապարհների և ներքին գործերի մինիստրներին 1896 թ. հղած իր նամակում գրում էր. «Մոսկովյան ուսումնական օկրուգի ղեկավարությունը խիստ մտահոգված է ուսանողական զանազան կազմակերպությունների (հայրենակցական, փոխօգնության և այլն)՝ ուսանողների վրա ունեցած իշխանության և հեղինակության աճով: Բանը հասնում է այնտեղ, որ ամառային արձակուրդների ժամանակ զեմստվոների առաջարկած ժամանակավոր աշխատանքների բաշխու-

[2] Российский государственный исторический архив в Санкт-Петербурге (*այսուհետև՝* РГИА), ф. 733, 1909 г., оп. 201, д. 102, лл. 2-5.

մը ուսանողության միջև իրականացնում են բացառապես այդ կազմակերպությունները: Անգամ եթե համալսարանական ղեկավարությանն առաջադրում է այդ աշխատանքների համար ավելի արժանավոր թեկնածուներ, ապա նրանք, վախենալով գնալ այդ կազմակերպություններին հակառակ, բացահայտորեն հրաժարվում են»[3]: Զեմստվոները, ելնելով տնտեսական և տեղային այլ բնույթի շահախնդրություններից, այս հարցում օգնում էին ուսանողական կազմակերպություններին՝ թաքցնելով ազատ աշխատատեղերը կամ էլ ուսանողներին ընդունում էին՝ անգամ ռեկտորատին տեղյակ չպահելով: «Մոսկվայի համալսարանի ռեկտորը,– ոչ առանց վրդովմունքի հայտնում էր Դելյանովը,– Տոմսկից ստացված նամակից է միայն իմանում, որ այնտեղ աշխատում է իրեն վստահված համալսարանից ուսանողական մի ամբողջ ջոկատ»[4]: Նման միջավայրում ապրող և ուսանող հայ երիտասարդությունը ևս, բնականաբար, չէր կարող չստեղծել իր հայրենակցական, մշակութային կազմակերպությունները, որոնց մի մասը, ձևավորվելով դեռևս XIX դ. կեսերին, դարավերջին և XX դ. սկզբներին ամրացան ու բավական մեծ դեր խաղացին հայ ուսանողության կյանքում: Այդ տիպի հայկական ուսանողական կազմակերպությունների առաջնեկն էր 1855 թ. Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների կողմից հիմնադրած «Ուսանողական ժողով» հայրենակցական միությունը և փոխօգնության դրամարկղը: Իր գոյության շուրջ 60 տարիների ընթացքում այդ կազմակերպությունը կարևոր դեր խաղաց՝ այս կամ այն չափով թեթևացնելով ուսանողների նյութական դրությունը: Ըստ արժանվույն գնահատելով փոխօգնության դրամարկղի գործունեությունը՝ նույն համալսարանի սան Կաչկաչյանցը «Մշակին» գրած իր նամակում այն համարում է Մոսկվայի համալսարանի շատ չքավոր հայ ուսանողների միակ հույսը[5]: Ուսանողական ժողովի նյութական բազան հայերեն լեզվով ներկայացումներից գոյացած գումարներն էին և հայ հասարակայնության նվիրատվությունները, որոնք հատկապես դարի վերջին պատկառելի թիվ էին կազմում՝ վկայելով տեղի հայ համայնքի ազգային մշակույթի նկատմամբ ունեցած հետաքրքրության աճի և միաժամանակ ուսանողների կենսամակարդակի բարձրացման մասին: 1895 թ. «Մուրճ» հանդեսը, օրինակ, հայտնում էր. «Մոսկվայի հայ ուսանողությունը տվեց մի երեկույթ, որի ժամանակ խաղացին «Մեծապատիվ մուրացկանները», իսկ մոտ 40 հոգուց բաղկացած խումբը (բոլորն էլ հայ օրիորդներ և երիտասարդներ) ուսանող Ալ. Սպենդիարյանի ղեկավարությամբ երգեցին ազգային ժողովրդական երգեր և Սպենդիարյանի «Ա՛յ վարդ, լսի՛ր աղաչանքս» երգը: Զուտ արդյունքը կազմեց 2100 ռուբլի»[6]: Չքավոր ուսանողության օգտին 1897 թ. կայացած համանման երեկույթը և դրան հաջորդած պարերը տվեցին ևս 2100 ռուբլու մաքուր եկամուտ[7]: Հավաքելով բավական պատկառելի գումարներ և արդարամտորեն տնօրինելով

---

[3] Государственный архив Ленинградской области (*այսուհետև՝* ГАЛО), ф. 14, оп. 2, д. 1047, лл. 2-2 об.

[4] *Նույն տեղում, թ. 3:*

[5] *«Փոխադարձ օգնության 40-ամյակը»,– «Մշակ», 1895, № 88:*

[6] *«Մոսկվայի հայկական երեկույթը»,– «Մուր», 1895, № 2, էջ 348:*

[7] *Նույն տեղում, 1897, № 2-3, էջ 403:*

դրանք՝ ուսանողական կազմակերպությունները, մասնավորապես ուսանողական ժողովը մեծ հեղինակություն ձեռք բերեցին ուսանողության միջավայրում՝ նպաստելով ուսանողական զանգվածների միաբանմանը և կազմակերպվածությանը: Այն, ինչպես ասվեց, 90-ական թվականների II կեսին դարձավ համահամալսարանական ուսանողական կամզակերպություն՝ «Միութենական խորհրդի» բաղկացուցիչ մասը: Հարկ է նշել, որ կազմակերպությունը, որի գոյությամբ առաջին հերթին շահագրգռված էր կարիքավոր ուսանողությունը, բնականաբար, ունեցել է, գուցեն ոչ այնքան հետևողական, դեմոկրատական ուղղվածություն: Սակայն այն երբևէ չի դարձել միասնական, առավել ևս քաղաքական նպատակներ հետապնդող կազմակերպություն, քանզի հայ ուսանողությունը ինքը բաղկացած էր տարբեր սոցիալական ծագում և հայացքներ ունեցող երիտասարդներից: Այս առումով, կարծում ենք, համոզիչ չեն նախախորհրդային մամուլում տեղ գտած այն հուշագրությունները, որոնցում Մոսկվայի համալսարանի հայկական ուսանողական կազմակերպությունը ներկայացվում է որպես միասնական կուռ կառույց, որի անդամներին բաժանում են՝ հիմք ընդունելով նրանց ծննդավայրը կամ էլ կրթական հաստատությունը՝ «լազարիստներ» և «կովկասցիներ»[8]: Առաջինում հեղինակը, որն այդ շրջանի նախկին ուսանողներից է, ընդգրկում է բոլոր նրանց, ովքեր համալսարան էին եկել Լազարյան ճեմարանից և կազմել են առանձին ազգային ուղղություն կամ խմբակցություն: Անտարակույս, Լազարյան ճեմարանի շրջանավարտները տարիներ շարունակ պահպանել են սերտ կապերը ինչպես միմյանց, այնպես էլ ճեմարանի հետ, սակայն ոչ այն ժամանակ, երբ Մոսկվայի համալսարանի հայ ուսանողության շրջանում ճեմարանականները մեծամասնություն էին կազմում, և ոչ էլ հետագայում, երբ Ռուսաստանի տարբեր վայրերից, գլխավորապես Անդրկովկասից եկած ուսանողությունը դարձավ թվապես գերակշիռ: Այսինքն՝ այդպիսի հոսանք չի եղել, և դա բնական է. չէ՞ որ «լազարիստներ» աշակերտական և ուսանողական դասընկերներ էին այնպիսի տարբեր քաղաքական, հասարակական հոսանքների ներկայացուցիչներ, ինչպիսիք էին կոմս Ի. Դելյանովը, Գևորգ Հախվերդյանը, Սիմեոն Սուլթանշահը, Հարություն Ավագյանը և այլոք: Մեր կարծիքով՝ Մոսկվայի համալսարանի հայ ուսանողության ազգային և քաղաքական նկարագիրը ավելի իրական է ներկայացնում 90-ականների մեկ այլ շրջանավարտ՝ բժիշկ Գարեգին Սարգսյանը, որը «Մուրճ» հանդեսում տպագրած իր թղթակցության մեջ գրում է. «Կամենում եմ ներկայացնել Մոսկվայի համալսարանի հայ ուսանողության պատկերը, որքան ես կարողացել եմ հասկանալ ուսանողությանս երկար տարինեի ընթացքում: Ըստ իս՝ մեր ուսանողությունը բաժանվում է երկու կարգի՝ գաղափարական և ոչ գաղափարական, վերջին տիպը իր հերթին կարելի է բաժանել երկու խմբի՝ մարդիկ, որոնց համար բարձրագույն դպրոցը մի հիմնարկություն է, որ տալիս է միջոց՝ ձեռք բերելու հասարակական որոշակի դիրք՝ իր արտոնություններով: Ուսումը չի զարգացնում նրա խելքը և չի ակտիվացնում նրա հոգին: Նա կարևոր չի համարում լսել դասախոսություններ, կարդալ գրքեր, նա հարցասիրությունից զուրկ է, նրան դուք

[8] *«Գործ», 1917, № 1, էջ 37:*

հաճախ կպատահեք դիմակահանդեսներում, պարերեկույթներում տոնազգեստով և սպիտակ ձեռնոցներով: Նրանց ճնշող մեծամասնությունը հայերեն չգիտի: Ոչ մի հասարակական գործ կամ խնդիր նրան չի հետաքրքրում՝ լինի դա հայկական, թե այլազգի: Այս տիպի ուսանողների մեծամասնությունը հարուստ ծնողների զավակներ են և հիմնականում ուսանում են իրավաբանական ֆակուլտետում: Նա ապրել, ապրում և ապրելու է լոկ իր համար, նրա ներկան ապահովում է հոր կարողությունը, ապագան՝ դարձյալ հոր կարողությունը՝ գումարած դիպլոմը և հովանավորությունը: Երկրորդ տիպի ուսանողները մեծամասնություն են կազմում, նրանք բարեխղճորեն հաճախում են դասախոսություններին, կատարում են այն, ինչ պահանջվում է նրանցից, նրանք երբեմն զբաղված են նաև ուրիշ գործերով, հետաքրքրվում շրջապատին հուզող խնդիրներով, սակայն այդ հետաքրքրությունը հարատև չէ և հիմնականում մարում է ուսանողական կյանքին հրաժեշտ տալու հետ: Հասարակության մեջ այդ տիպի ուսանողի նշանակությունը սահմանափակվում է միայն նրա բարձրագույն կրթությամբ: Ուսանողության գաղափարական մասը կազմում է այն բաժինը, որը գույն է տալիս ժամանակի ողջ ուսանողությանը, ըմբռնում է ժամանակի ոգին և հասարակության ցավը և ուրախությունը: Նա կյանք է մտնում՝ արդեն ծանոթ ժամանակակից հիմնախնդիրներին, հմտանում հատկապես հայկական կյանքին վերաբերող հարցերում: Նրանք ազդում են ուսանողության անտարբեր մասի վրա, դառնում են ուսանողական, բարեգործական, հրատարակչական ընկերությունների անդամ, և մնում է ցանկանալ, որ մեր հասարակության կյանքի պայմանները չկապեն նրա ձեռքերը»[9]: Վերապահությամբ մոտենալով հոդվածագրի որոշ գնահատականներին և եզրակացություններին, որոնք չափազանց կտրուկ և անվերապահ են, քանի որ հազվադեպ չէին նաև հասարակության բարձր խավից ելած, սակայն ազգային ու քաղաքական հոգսերով ապրող ուսանողները, չի կարելի չհամաձայնվել, որ իրոք, հայ ուսանողությունը բաժանված էր սոցիալական տարբեր խմբերի՝ իրենց ուրույն ազգային ու սոցիալական ըմբռնումով և առաջադրված խնդիրներով: Ավելին, կարծում ենք, որ վերոհիշյալ բնութագրումները ինչ-որ չափով պահպանում են արդիականությունը:

Բնական է, որ «Ուսանողական ժողովը» և ուսանողական մյուս կազմակերպություններն առաջին հերթին միավորում էին գաղափարապես ակտիվ ու ազգային մտածողության տեր երիտասարդներին: Այս հանգամանքով էլ մեծապես պայմանավորված է այդ կազմակերպությունների ազգային ակտիվ գործունեությունը: XIX դ. վերջին և XX դ. սկզբին, կապված ազգային ինքնագիտակցության բուռն զարթոնքի հետ, ուժեղանում է հայ ուսանողության համախմբման, ինքնուրույն ազգային կազմակերպություններ ստեղծելու ձգտումը, մեծանում է նրանց հետաքրքրությունը հայ մշակույթի, գրականության և պատմության նկատմամբ: Դրա արդյունքը դարձավ XX դարասկզբին հայ ուսանողական մի քանի նոր կազմակերպությունների ստեղծումը: Նման կազմակերպություններից էին «Երևանցի ուսանողների փոխօգնության դրամարկղը» և «Հայկական հայրենակցական ընկերությունը»: Համալ-

[9] *Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Մոսկվայի հայ ուսանողությունը.– «Մուրճ», 1895, № 5, էջ 710–714:*

սարանի ռեկտորատին ներկայացրած իրենց ծրագրի նախագծում ընկերության կազմակերպիչները նշում են, որ ընկերության հիմնական նպատակն իր անդամների նյութական կարիքների բավարարումն է, և նրա անդամ կարող են համարվել համապատասխան խնդրանքով դիմած բոլոր հայ ուսանողները: Հայրենակցական ընկերության ղեկավար օրգաններն էին ընդհանուր ժողովը, վարչությունը և վերահսկողական կոմիտեն: Ընդհանուր ժողով գումարվում էր տարին երկու անգամ, որի որոշումները համարվում էին օրինական և պարտադիր անդամների ոչ պակաս, քան կեսի առկայությամբ: Որոշումներն ընդունվում էին պարզ մեծամասնությամբ: Ընդհանուր ժողովում ընտրվում էր 10 մարդուց բաղկացած վարչություն և հինգ անձից բաղկացած վերահսկողական կոմիտե, որոնք էլ իրականացնում էին կազմակերպության առօրյա գործունեությունն ու ղեկավարումը[10]*: Ինչպես տեսնում ենք, այս ընկերությունը ևս կուռ և հստակ կառուցվածքով կազմակերպություն էր, որի՝ հայ ուսանողների նյութական կարիքների բավարարմանն ուղղված գործունեությունը միաժամանակ նպաստում էր նրանց հայրենակցական կապերի ամրապնդմանը և համախմբմանը:*

Ավելի լայն խնդիրներ է դնում իր առջև նույն շրջանում ստեղծված «Հայ գրականության երկրպագուների՝ Խ. Աբովյանի անվան հայկական ուսանողական ընկերությունը»: Ռեկտորատին ներկայացրած ծրագրում, որը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ՝ կրճատումներով, ասվում էր. «Մեր խնդիրն է ուսումնասիրել հայ գրականությունը և ամեն կերպ նպաստել նրա զարգացմանը. այդ նպատակին հասնելու համար՝ 1. համալսարանում կազմակերպել հայ գրականության դասավանդում, որի համար օգտագործել ինչպես առարկային քաջագիտակ հայ ուսանողների ուժերը, այնպես էլ հնարավորության դեպքում մասնագետներ հրավիրել դրսից, 2. կազմակերպել թատերական ներկայացումներ, համերգներ, գրական-երաժշտական երեկոներ, ցուցահանդեսներ և այլն, 3. հրատարակել ժողովածուներ, պարբերականներ, 4. ստեղծել գրադարան և ընթերցասրահ: Ընկերության միջոցները կազմում են՝ ա) անդամավճարները՝ 6-ական ռուբլու չափով, բ) համերգներից և ներկայացումներից ստացված գումարները, գ) մասնավոր նվիրատվությունները: Ընկերության անդամ կարող է լինել համալսարանի յուրաքանչյուր ուսանող: Ընկերության ղեկավարումը իրականացնում է ընդհանուր ժողովը և նրա կողմից ընտրված կոմիտեն»[11]*: Հատկանշական է, որ համալսարանի ղեկավարությունը ծրագրի սույն խնդրագիրը հաստատելուց առաջ նախ նրանից հանել է անգամ փոքր-ինչ քաղաքական երանգավորում ունեցող կետերը, ապա խստորեն հանձնարարել համալսարանի համապատասխան ծառայություններին՝ աչալրջորեն վերահսկել ինչպես ուսումնասիրվելիք հայ հեղինակների, այնպես էլ հրավիրվելիք մասնագետների քաղաքական բարեհուսությանը: Ցավոք, արխիվային նյութերի սակավությունը մեզ հնարավորություն չի տալիս խոսելու ընկերության ծա-*

[10] Центральный государственный исторический архив г. Москвы (*այսուհետև՝* ЦГИАМ), ф. 418, оп. 498, д. 3, лл. 1-2.

[11] Там же, оп. 499, д. 44, лл. 1-5.

վալած կոնկրետ աշխատանքների մասին, սակայն վերոհիշյալ ծրագիրն ինքնին վկայում է հայ ուսանողության հետքրքրությունների, խոհերի ու նպատակների մասին:

Խոսելով հայ ուսանողության ստեղծած խմբակների գործունեության մասին՝ հարկ է կարևորել նաև հայ ուսանողության քաղաքական անլեգալ գործունեությունը, որը հատկապես մեծ ծավալ ընդունեց XX դարասկզբին՝ դառնալով համառուսական ուսանողական քաղաքական պայքարի բաղկացուցիչը: «Հայրենասերների միության» ինքնալուծարումից հետո հայ ուսանողների մի ստվար հատված ակտիվորեն մասնակցել է դասադուլներին, ցույցերին, ակտիվորեն ներգարվվել ինքնակալության դեմ մղվող պայքարին: Ռուսաստանյան Դաշնության պետական արխիվի ոստիկանական դեպարտամենտի հատուկ բաժնի փաստաթղթերում հանդիպում ենք տասնյակ և տասնյակ հայ ուսանողների անունների, որոնք հեռացվել կամ ձերբակալվել են ուսանողական շարժումներին մասնակցելու համար: Նրանց թվում են Արշակ Ղազարյանը, Փիլիպոս Բաբելովը, Գրիգոր Բաբայանցը, Գրիգոր Դավթյանը, Գևորգ Իսահակյանցը, Ռուբեն Մանուկյանը, Արմենակ Մելիքյանը, Համազասպ Մինասյանը և այլք[12]: Նրանցից ոմանք եղել են ուսանողական շարժման ղեկավար շարքերում: Այսպես, Մոսկվայի համալսարանի ուսանողների համագումարի գործադիր կոմիտեի ձերբակալված անդամների թվում էին Հարություն Մալումյանը և Հովսեփ Ավալովը[13]: Վերջինիս տան խուզարկությունը հայտնաբերեց բազմաթիվ բյուլետեններ, “Рабочая мысль” *թերթի թարմ համարներ և արգելված այլ գրականություն, որի համար նա ձերբակալվեց[14]:*

Ուսանողական շարժումներին իր անթաքույց համակրանքն էր ցուցաբերում նաև պրոֆեսորադասախոսական կազմի առավել առաջադիմական մասը: Նրանց թվում էր նաև համալսարանի հայազգի պրոֆեսոր Գ. Ս. Ղամբարովը (Ղամբարյան): Մոսկվայի ոստիկանության հասարակական կարգի և անվտանգության բաժնի պետը ներքին գործերի մինիստրին ուղղած իր զեկուցագրում գրում էր. «Մոսկվայի համալսարանի պրոֆեսորների մի մասը աչառու_ վերաբերմունք ունի դասադուլին չմասնակցող և քննության ներկայացած ուսանողների նկատմամբ ու նրանց միտումնավոր տապալում է: Մասնավորապես այդպես է վարվում պրոֆ. Ղամբարովը, որը բացահայտորեն հայտարարել է, որ քննության ներկայացած անպիտաններին «մեկ» կնշանակի: Նրան իրենց գործողություններով աջակցում են համալսարանի պրիվատ դոցենտ Ի. Խ. Օզերովը, դոցենտ Վ. Է. Դենը. այդ կերպ վարվել սպառնացել են նաև պրոֆեսորներ Ն. Դ. Զելինսկին և Վ. Ի. Վերնադսկին»[15]:

Այսպիսով, ակնհայտ է, որ հայ ուսանողությունն իր ամենաակտիվ մասնակցությունն է բերել ուսանողական շարժումների բոլոր փուլերին:

---

[12] Государственный архив Российской федерации (*այսուհետև՝* ГАРФ), ф. 102, оп. 226, д. 3, ч. 1, лл. 8, 11, 12, 14, 41.

[13] *Նույն տեղում:*

[14] ГАРФ, ф. 102, оп. 226, д. 3. ч. 1, л. 32.

[15] Там же, л. 107-108.

Ի մի բերելով վերևում ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ հայ երիտասարդության մի ստվար հատված, ուսանելով Մոսկվայի համալսարանում, ժամանակի լավագույն, եվրոպական մակարդակի կրթություն ստանալուց զատ ապրել է լիարյուն մշակութային և հասարակական-քաղաքական կյանքով, չի կորցրել կապը հայրենիքի հետ, մտահոգված է եղել ազգային խոհերով ու խնդիրներով և դաստիարակվելով որպես ազգային մտավորական՝ իր ծանրակշիռ ավանդն է ներդրել հայ գիտության, մշակույթի և քաղաքական մտքի զարգացման ասպարեզում:

ИЗ ИСТОРИИ ОБЩЕСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ СТУДЕНТОВ-АРМЯН МОСКОВСКОГО УНИВЕРСИТЕТА
(Конец XIX – начало XX века)

БЕНИАМИН МАНУКЯН

Р е з ю м е

В конце XIX – начале XX века Московский университет оставался одним из центров подготовки армянской интеллигенции, где армянские студенты не только получали высшее образование европейского уровня, но и жили полнокровной общественно-политической и культурной жизнью. Они создавали студенческие кружки, землячества, театр, кассы взаимопомощи и т. д. Одним из главных аспектов культурной жизни армянских студентов было изучение армянской истории и словесности, для чего и был создан кружок “Любителей армянской литературы им. Х. Абовяна”. Большинство студентов не теряло связь с родиной, их волновали национальные проблемы, борьба родного народа за освобождение. Многие из них внесли весомый вклад в армянскую науку и культуру, а также в развитие политической мысли.